ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ Ո ՄԱԱՊՁԲ-ԱՆՁՆԱԳԻՐ/2023/Հ-29

ք. Երևան «06» 02 2023թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ՀՀ ոստիկանության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Լեհական արժեթղթերի արտադրամաս» ԲԸ**-ն, ի դեմս վաճառքի բաժնի տնօրեն՝ **Գ. Ռաֆալսկայի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **144 400 000** (մեկ հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ-ն ներառյալ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ հրատապ հրատապ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հրատապ հրատապ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀոստիկանություն	<<Լեհական արժեթղթերի
ք. Երևան, Նալբանդյան 130	արտադրամաս>> ԲԸ
ՀՀ Ֆինանսների նախարարության	
Աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011023554	Sales Director
ՀՎՀՀ 01569613	
հեռ. 59-66-32	
էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru	
Վ. Մովսիսյան	Grażyna Rafalska
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալի	
պարտականությունները ժամանակավոր կատարող/	
(ստորագրություն) Կ.Տ	

POLSKA WYTWÓRNIA
PAPIERÓW WARTOŚCIOWYCH S.A.
ul. Sanguszki 1, 00-222 Warszawa
tel. centr. 022 635-14-81, fax 635-68-51
Identyfikator 011836796

Grażyna Rafalska

Հավելված N 1
«06» 02 2023 թ. կնքված
ՀՀ Ո ՄԱՊՁԲ-ԱՆՁՆԱԳԻՐ/2023/Հ-29 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	22451100/5	Անձնագրեր	Տես ստորև	հատ	722	144 400 000	200 000	Ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 17/10	200 000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո 20 օրացուցային օրվա ընթացքում 100 000 հատը, 30 օրացուցային օրվա ընթացքում 100 000 հատը, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.

Տ ե խ ն ի կ ա կ ա ն ն կ ա ր ա գ ի ր

1.Նույնականացման քարտը տպագրել <<Նույնականացման քարտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի N411-Ն որոշման պահանջների համաձայն՝ քարտի չիպի տեղը թողնելով առանց տպագրության:

2. Նույնականացման քարտի բոլոր պարամետրերը պետք է համապատասխանեն ICAO և ISO պահանջներին: Դրանք պետք է ներառեն ISO պահանջները՝ հաստատված բոլոր ICAO ստանդարտներով, ներառյալ դիմանկարի պահանջները:

3. Նույնականացման քարտը պետք է պատրաստված լինի պոլիկարբոնատ պլաստիկ նյութից (PC)՝ 10 տարի կյանք ունենալու ժամկետով (թեստային հաշվետվությունները պետք է ներկայացվեն անկախ լաբորատորիաների կողմից), այն պետք է ունենա շերտավորմանը հակազդեցության հնարավորություն՝ քարտը չպետք է կոտրվի սովորական մաշվածությունից և Հայաստանի Հանրապետության կլիմայական պայմաններից, չենթարկվի քիմիական նյութերի ազդեցության, ճկման ճնշմանը, ոլորման ճնշմանը, դինամիկ ճկմանը:

4. Նույնականացման քարտը պետք է համատեղելի լինի ըստ հետևյալ ստանդարտների կամ թեստերի՝

- ISO/IEC 7810 ID Card: Ֆիզիկական առանձնահատկություններ
- ISO/IEC 7812 ID Card: Ներկառուցված պլաստայով կոնտակտային քարտ
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր, ճկում
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր, ոլորում
- ISO 10373-3 մեխանիկական թեստեր, խտացում
- ISO 10373-1 կլիմայական թեստեր,ջերմաստիճան
- ISO 10373-1 կլիմայական թեստեր, խոնավություն
- ISO 7816-3 կլիմայական թեստեր, էլեկտրական ազդանշաններ և փոխանցման պրոտոկոլներ
- ISO 10373-3 էլեկտրական թեստեր, ստատիկ էլեկտրաէներգիա
- DIN EN ISO 4892-2, B այլ թեստեր,ուլտրամանուշակագույն լույս
- ISO 9001-2001 ISO 9001 Հայտատուի արտադրամասի հավաստագիր
- ISO/IEC 7816-1 Ֆիզիկական առանձնահատկություններ
- ISO/IEC 7816 -2 Կոնտակտների ուղղություններ և գտնվելու վայր
- ISO/IEC 7816-3 Էլեկտրական ինտերֆեյս և փոխանցման պրոտոկոլներ
- ISO/IEC 7816-4 Միջոլորտային հրահանգներ՝ փոխադարձ փոխանակման համար
- ISO/IEC 7816-5 Համարակալման համակարգ և գրանցման ընթացակարգ առաջարկ ներկայացնողների համար
- ISO/IEC 7816-6 Միջոլորտային տվյալների տարրեր՝ փոխադարձ փոխանակման համար
- ISO/IEC 7811 Նույնականացման քարտերի գրառման տեխնիկայի նկարագրություն:

5. Կապալառու կազմակերպությունը պետք է երաշխավորի ընդհանուր և անբաժանելի նույնականացման քարտի ձևավորումը: Պետք է ապահովի նույնականացման քարտի մակերևույթի ինչպես կառուցվածքային, այնպես էլ գեղարվեստական դիզայնը, որպեսզի դրա նմանակումը, վերարտադրումը կամ որևէ ձևով կեղծումը խիստ դժվար լինի: Լամինացված քարտի վերջնական տարբերակը չպետք է բացվի կամ շերտավորվի: Այն բացելու ուժային փորձերը պետք է հանգեցնեն քարտի ոչնչացմանը:

6. Նույնականացման քարտը պետք է ունենա հետևյալ անվտանգության պահանջները՝

- գիլոշային պատկերներ, այդ թվում՝ ռելիեֆ և փոփոխական բարակ գիծ: Բարակ գծի կառուցվածքը պետք է մասամբ ծածկի նկարի հատվածը
- ծիածանային տպագրություն
- միկրոտեքստ
- ուլտրամանուշակագույն ֆլուորեսցենտ տպագրություն(անտեսանելի կամ խառնված տեսանելի գույնի հետ)

7. Սահմանված բոլոր տվյալներն ու տպագրված տարրերը պետք էլինեն արտաքին շերտի ստորին մասում: Բացի նորմալ տեսանելի տարրերից պետք է լինեն այնպիսի տարրեր, որոնք տեսանելի են միայն հատուկ լուսային պայմաններում:

8. Նույնականացման քարտի չափերը - ID 1 (ինչպես ISO 7810 ստանդարտում)՝ 8,5x5,4 չափերի, հաստությունը՝ 840 միկրոն:

9. Նույնականացման քարտի բլանկը պետք է հնարավորություն ապահովի ներկայումս գործող կենսաչափական համակարգի միջոցով քարտի վրա հայերեն և անգլերեն լեզուներով գրաֆիկորեն անհատականացնելու հետևյալ տեղեկատվությունը՝

ա) ազգանունը, անունը, հայրանունը,
բ) ծննդյան վայրը, օրը, ամիսը, տարեթիվը
գ) սեռը
դ) քաղաքացիությունը
ե) ազգությունը՝ քաղաքացու ցանկությամբ
զ) բնակության վայրը (նշվում է միայն երկիրը)
է) քաղաքացու լուսանկարը
ը) նույնականացման քարտը տրամադրած ոստիկանության ստորաբաժանման անվանումը, ինչպես նաև քարտի տրամադրման և վավերականության ժամկետները, քարտի համարը:

10. Մատակարարման ենթակա նույնականացման քարտերն իրենց տեխնիկական հատկանիշներով, արտաքին տեսքով, բացառությամբ էլեկտրոնային կրիչի (չիպի) պետք է համընկնեն ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում տպագրվող և օգտագործվող նույնականացման քարտերին: Միաժամանակ, դրանք պետք է հնարավորություն ապահովեն ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող կենսաչափական համակարգի սարքերի և սարքավորումների միջոցով իրականացնել քաղաքացիների տվյալների անհատականացումը քարտի բլանկի վրա (նույնականացման քարտի տպագրությունը՝ Bauer սարքի միջոցով), որակի ստուգումը, թողարկումը և օգտագործումը՝ առանց շահագործվող սարքերի, դրանց դետալների, գործող ծրագրային համակարգի փոփոխության:

11.Նույնականացման քարտի բլանկի համարակալումն իրականացվում է առաջին էջում՝ ներկայումս շրջանառության մեջ գտնվող նույնականացման քարտերին համապատասխան մասում: Նույնականացման քարտի 200.000 հատ բլանկների համարները պետք է սկսվեն 01481721(x) համարով և ավարտվեն 01681720(x) համարով:

12.Նույնականացման քարտերը պետք է փաթեթավորված լինեն 200 քարտ պարունակող թղթե (կարտոնե) արկղերի մեջ, որոնք հետագայում զմռսվում ու դասավորվում են 4000 նույնականացման քարտ տարողության կարտոնե արկղերի մեջ:

13. Տեղափոխությունը մինչև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կատարվում է Կապալառուի ուժերով:

14. Նմուշը կցվում է / ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի N411-Ն որոշման հավելված 2/

Техническое описание

1. Идентификационную карту напечатать согласно действующему положению „Об идентификационных картах,, в Республике Армения и решением Правительства РА N411-Н от 05.04.2012г., место электронного чипа должно оставаться без печати.

2. Все параметры идентификационной карты должны соответствовать параметрам ICAO и ISO. Они должны включить в себя требования ISO, утвержденные всеми стандартами ICAO, включая требования портрета.

3. Идентификационная карта должна быть изготовлена из пластико поликарбонатного материала (PC) с годностью сроком на 10 лет (результаты теста должны быть представлены независимыми лабораториями), иметь способность противостояния к расслоению, карта не должна ломаться от износа а так же от климатических условий Республики Армения, не подчиняться химическим воздействиям, гибкому давлению, давлению изгиба, динамическому давлению.

4. Идентификационная карта должна быть совместима со следующими стандартами и тестами

- ISO/IES 7810 ID Card физические особенности

- ISO/IES 7812 ID Card контактная карта со встроенной платой

- ISO 10373-3 механические тесты, гибкий

- ISO 10373-3 механические тесты, изгиб

- ISO 10373-3 механические тесты, плотность

- ISO 10373-1 климатические тесты, температура

- ISO 1037-1 климатические тесты, влажность

- ISO 1037-3 климатические тесты, электрические сигналы и протоколы передачи

- ISO 1037-3 электрические тесты, статическая электроэнергия

- DINEN ISO 4892-2, B другие тесты, ультрафиолетовые лучи

- ISO 9001-2001 ISO 9001 Сертификат заявителя производства

- ISO/ES 7816-1 физические особенности

- ISO/ES 7816-2 направления контактов и местонахождение

- ISO/ES 7816-3 Электрический интерфейс и протоколы передачи

- ISO/ES 7816-4 Межотраслевые инструкции по взаимному обмену

- ISO/ES 7816-5 Система нумерации и процедура регистрации для заказчиков

- ISO/ES 7816-6 Элементы межотраслевых данных по взаимному обмену

- ISO/ES 7811 Описание записывающего оборудования идентификационных карт

5. Подрядная организация должна гарантировать общую и неотъемлемую часть оформления идентификационной карты должна обеспечить как объемную плоскость технического строения, так и художественного дизайна, чтобы идентификация, преобразование или подделка были труднодоступными.

Ламинированная идентификационная карта не должна раскрываться и не расслаиваться.

Попытки раскрыть и приложить усилия должны привести к уничтожению идентификационной карты.

6. Идентификационная карта должна иметь следующие требования безопасности

- гильотинные изображения, в том числе рельеф и переменную тонкую линию. Структура тонкой линии частично должна покрыть часть фото

- радужное печатание

- микротекст

- ультрафиолетовая флуоресцентная печать (бесцветная или смешанная с видимыми цветами)

7. Все указанные данные и напечатанные элементы должны быть внизу внешнего слоя. Кроме нормально видимых элементов должны быть такие элементы, которые видимы при особых условиях освещения.

8. Размеры идентификационной карты- ID 1 (как в стандарте ISO 7810), размеры – 8.5x5.4, толщина – 840 микрон.

9..Бланк идентификационной карты должен обеспечить возможность графически на армянском и английском языках персонализировать следующие данные через ныне действующую биометрическую систему

а. фамилия, имя. отчество

б. место рождения, день, месяц, год

в. пол

г. гражданство

д. национальность, с согласия гражданина

е. место жительства (отмечается только страна)

ж. фото гражданина

з. каким подразделением полиции выдана идентификационная карта, дата выдачи и срок действия, номер карты

10. Идентификационные карточки подлежащие поставке своими техническими характеристиками , внешним видом, за исключением электронного носителя (чипа) должны совпадать с ныне напечатанными и употребляемыми на территории Республики Армения идентификационными картами. Одновременно должна быть предоставлена возможность персонализации данных граждан на бланке карты с помощью устройств и оборудования биометрической системы, действующей в настоящее время в Республике Армения (печать идентификационной карты через устройство Bauer), контроль качества, выпуск и использование без использования устройств, их деталей, изменение действующей системы программного обеспечения.

11.Нумерация бланков идентификационных карточек осуществляется на первой странице карточек, в соответствующем разделе ныне находящихся в обращении идентификационных карточек. Номера 200.000 штук бланков идентификационных карт должны начинаться с номера 01481721(x) и заканчиваться на номер 01681720(x)

12.Идентификационные карты должны быть упакованы в бумажных (картонных) коробках с содержанием 200 карточек, которые в дальнейшем будут раскладываться и запечатываться в картонные коробки вмещающие 4000 идентификационных карт.

13. Перевозка до Паспортно-визового управления полиции РА осуществляется подрядчиком.

14. Образец - прилагается Приложение 2 решения Правительства РА N 411-Н от 05.04.2012г.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023554
ՀՎՀՀ 01569613
հեռ. 59-66-32
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

_____ Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալի
պարտականությունները ժամանակավոր կատարող/
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Լեհական արժեթղթերի
արտադրամաս>> ԲԸ

Sales Director
Grażyna Rafalska

POLSKA WYTWÓRNIA
PAPIERÓW WARTOŚCIOWYCH S.A
ul. Sanguszki 1, 00-222 Warszawa
tel. centr. 022 635-14-81, fax 635-68-51
Identyfikator 011836796

Հավելված N 2
<<06 >> 02 2023թ.
ՀՀ Ո ՄԱՀՊԶԲ-ԱՆՁՆԱԳԻՐ/2023/Հ-29
ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	22451100/5	Անձնագրեր		72 200 000	72 200 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000	144 400 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023554
ՀՎՀՀ 01569613
հեռ. 59-66-32
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru
Վ. Առվսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալի
պարտականությունները ժամանակավոր կատարող/
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Լեհական արժեթղթերի
արտադրամաս>> ԲԸ

Sales Director
Grażyna Rafalska

POLSKA WYTWÓRNIA
PAPIERÓW WARTOŚCIOWYCH S.A.
ul. Sanguszki 1, 00-222 Warszawa
tel. centr. 022 635-14-01, fax 635-68-51
Identyfikator 011836796

Հավելված 3

« » 20 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշի		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 20 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախազծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն